



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 38

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղսի համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Քաղսի համայնքի.

1) Խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌԱՅԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. -մարտի- 24-
գ.Քաղսի





Քաղսի համայնքի ղեկավարի
2020 թվականի մարտի 24-ի N 38 որոշման

ԿԱԶՄ

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. Խորհրդի ղեկավար՝ Ռաֆայել Գրիգորյան /համայնքի ղեկավար/,
2. Խորհրդի ղեկավարի տեղակալ՝ տարիանման և պատասխարման պատասխանատու՝ Աշոտ Անտոնյան /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. Խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Թադևոսյան Դուխիկ /առաջատար մասնագետ/,
4. Խորհրդի անդամներ՝
 - 1) Ավագանու անդամ՝ Ժ. Ավագյան,
 - 2) Ավագանու անդամ՝ Մ. Ենոքյան,
 - 3) Ոլորտային պատասխանատուներ՝
 - ա. ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Գ. Սարգսյան
 - բ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Գ. Հայրապետյան
 - գ. բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Հ. Գրգորյան
 - դ. գյուղ. կենդանիների ապահովման պատասխանատու՝ Ս. Գրիգորյան
 - դ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Վ. Գրիգորյան
 - ժ.անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Աշոտ Անտոնյան :



ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԱՌԿ խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Քաղսի համայնքի աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Քաղսի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի ԱՌԿ պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի ԱՌԿ պլանում:

2. ԱՌԿ խորհրդի ԱՌԿ նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,
2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,
3) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,
4) Աղետների ռիսկի նվազեցման (այսուհետ՝ ԱՌՆ) և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում ԱՌՆ միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) ԱՌԿ պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌՆ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացումը՝ բնակչության իրազեկման միջոցով,

13) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

3. ԱՌԿ խորհրդի ԱԻ արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

8) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

9) առաջին օգնության իրականացման ապահովումը,

10) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

11) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

12) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

13) դիակների հուղարկավորման համար հողիատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

14) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

15) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

16) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

17) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 39

ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղսի համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի նվազեցման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. մարտի 24_

գ.Քաղսի



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Համայնք Քաղսի 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- I. Համայնքի բնութագիր
- II. Համայնքի աղետների ռիսկի կառավարման համակարգ
- III. Աղետների ռիսկի նվազեցում
- 3.1. Համայնքի ընդհանուր վտանգների, խոցելիության նկարագրություն, դրանց բացասական հետևանքները և հնարավոր լուծումները
- 3.2. Համայնքի կարողությունների նկարագրություն
- IV. Արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպում
- 4.1. Ազդարարման կազմակերպում
- 4.2. Իրազեկման կազմակերպում
- 4.3. Տեղեկատվության հավաքման և հաղորդման կազմակերպում (իրավիճակի գնահատում)
- 4.4. Բնակչության տարածահանման կազմակերպում
- 4.5. Բնակչության պատասխարման կազմակերպում
- 4.6. Բնակչության անհատական պաշտպանական միջոցների ապահովման կազմակերպում
- 4.7. Ուժերի և միջոցների պատրաստվածության բերում
- 4.8. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում
- 4.9. Հրդեհաշիջման կազմակերպում
- 4.10. Հասարակական կարգի պահպանման կազմակերպում
- 4.11. Բնակչության բժշկական և առաջին օգնության կազմակերպում
- 4.12. Տրանսպորտային ապահովման կազմակերպում
- 4.13. Կապի և տեղեկատվության փոխանակման ապահովման կազմակերպում
- 4.14. Նյութատեխնիկական ապահովման կազմակերպում
- 4.15. Կոմունալ-էներգետիկ ապահովման, կապի և տրանսպորտային հաղորդակցության կապերի առաջնահերթ վերականգնողական աշխատանքների իրականացում
- 4.16. Ինժեներական միջոցառումների կազմակերպում
- 4.17. Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպում և հաշվառում
- 4.18. Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի անվտանգության կազմակերպում
- 4.19. Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում
- 4.20. Կենսաապահովման կազմակերպում
- 4.21. Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը
- 4.22. Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության կազմակերպում
- 4.23. Բնակավայրերում աղետների հետևանքների վերացման ուղղությամբ միջոցառումների անցկացում
- 4.24. Մարդասիրական օգնության ստացման, բեռնաթափման, բաշխման և այլ պետություններից ժամանած փրկարարական ուժերի ընդունման կազմակերպում
- 4.25. Փոխգործողությունների կազմակերպում
- V. Համայնքի վերականգնման/վերակառուցման կազմակերպում

VI. Աղետների ռիսկի կառավարման պլանի հավելվածներ
 VII. Հիմնական հասկացություններ
 VIII. Հապավումներ

I. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Աղյուսակ 1

1.	Համայնքի նկարագիր	Բարելիստն	Քանակ	Վթարային
2.	Կլիմա	Սոլակ, Լեռնանիստ	1	-
3.	Սահմանակից համայնքների անվանումները	4408		-
4.	Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	1700		-
5.	Բարձրությունը ծովի մակերևույթից (Մ)	6718		-
6.	Համայնքի շենքեր-շինություններ			
8.1.	Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ2)			
8.2.	Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	4408		
8.3.	Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	3480		
8.4.	Ոչ բնակելի շենքեր-շինություններ	1140		
7.	Հողային ֆոնդ և գյուղատնտեսություն	545		
9.1.	հողեր, ընդամենը (հա)	760		
9.2.	գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	109		
9.3.	բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	51		
9.4.	խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	6		
9.5.	մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը			
9.6.	խոզերի գլխաքանակը			
9.7.	գյուղատնտեսական տեխնիկա՝			
9.7.1.	տրակտորներ (քանակը)			
9.7.2.	կոմբայներ (քանակը)			
8.	Տրանսպորտային համակարգ՝			
10.1.	Ճանապարհներ	Համայնքային, միջհամայնքային, Երևան – Սևան մայրուղի		
10.2.	Կամուրջներ	3 հատ		

10.4.	Երկաթուղի	1 հատ	
9.	Ենթակառուցվածքներ՝		
11.1.	Համայնքում գազիֆիկացման առկայությունը (ըստ բնակավայրերի)	95%	
11.2.	Էլեկտրականություն (ըստ բնակավայրերի)	100%	
11.3.	Խմելու ջուր (ըստ բնակավայրերի)	100%	
11.4.	Ոռոգման ջուր (ըստ բնակավայրերի)	40%	
11.5.	Կոյուղի (ըստ բնակավայրերի)	20%	
11.6.	Հեռախոս (ըստ բնակավայրերի)	100%	
11.8.	Գերեզմանատան առկայությունը համայնքում (ըստ բնակավայրերի)	2 հատ	
10.	Վտանգավոր օբյեկտներ/կառույցներ		
12.2.	Հրդեհավտանգ	Գտնվելու վայրը ԱԳԼՃԿ՝ Երևան- Սևան մայրուղի Բենզալցական՝ Երևան- Սևան մայրուղի	Օգտագործվող նյութ Բենզին , գազ
12.3.	Պայթյունավտանգ	ԱԳԼՃԿ՝ Երևան- Սևան մայրուղի Բենզալցական՝ Երևան- Սևան մայրուղի	Բենզին , գազ
12.5.	Համայնքում կամ համայնքին սպառնացող ջրամբար	Ջրամբար	
12.5.1.	Անվանում	Հրազդան լիճ	
12.5.2.	Պատկանելիություն	Հրազդան քաղաք	
12.5.3.	Գտնվելու վայրը	Ախպարե թաղամաս	
12.5.5.	Համայնքի ջրածածկման հնարավոր հատվածը	Մոտավորապես 4000քմ	
12.5.6.	Հնարավոր ջրածածկման ժամանակը	1 ժամ	

11.	Կենցաղ-սպասարկման օբյեկտների քանակը (ըստ բնակավայրերի)	3	
12.	Բնակչություն		
14.1.	Ընդհանուր	Թվաքանակ 2530	Հաշմանդամ 71
14.2.	Տղամարդ	1392	Դժվար տեղաշարժվող 30
14.3.	Կին	1138	
14.4.	0-3 տարեկան	92	
14.5.	3-6 տարեկան	115	
14.6.	6-18 տարեկան	459	

14.7.	18-65 տարեկան	1638		
14.8.	65 բարձր	226		
14.15.	Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը	12		
13.	Առողջապահական համակարգ՝			
15.1.	Համայնքի բժշկական հաստատությունների քանակը (ըստ բնակավայրերի)	Բուժ. ամբուլատորիա		
15.2.	Բուժ աշխատողների քանակը (ըստ բնակավայրերի)	4/ չորս/ աշխատակից		
15.3.	Մոտակա բժշկական հաստատություն (վայր/կմ)	<<Հրազդան բժ. կենտրոն >>		
14.	Ինժեներական տեխնիկա՝			
17.1.	Էլեկտրատորների քանակը	2		
17.3.	ավտոաշտարակների քանակը	1		
17.4.	ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը (ոստիկանությունում գրանցված)	21		
17.5.	թրթուրավոր տրակտորների քանակը	10		
17.7.	կոմպրեսոր	1		
15.	Տրանսպորտային միջոցներ՝			
18.1.	Միկրոավտոբուսների քանակը (ըստ բնակավայրերի)	5		
18.2.	Ավտոբուսների քանակը (ըստ բնակավայրերի)	2		
18.3.	Անհատական մեքենաների քանակը (ըստ բնակավայրերի)	836		
16.	Մշակութային, կրթական, մարզական հաստատություններ			
19.1.	Նախադպրոցական ուսումնական հաստատություն	1		
19.7.	Դպրոց	1		
19.10.	Մշակույթի տուն	1		
17.	Համայնքապետարանի հեռավորությունը			
20.1.	Երևանից (կմ)	43կմ		
20.2.	մարզկենտրոնից (կմ)	7կմ		
18.	Արձագանքող ծառայությունների առկայությունը			
21.1.	հրշեջ/փրկարարական ջոկատ (ըստ բնակավայրերի)	Քաղաք Հրազդան		
21.2.	ոստիկանություն	Աթարբեկյան Թաղամաս		

	(ըստ բնակավայրերի)	
21.3.	շտապ օգնություն (ըստ բնակավայրերի)	Միկրոշրջան թաղամաս
21.4.	գազի վթարային ծառայություն (ըստ բնակավայրերի)	Քաղաք Հրազդան
21.5.	հոսանքի վթարային ծառայություն (ըստ բնակավայրերի)	Քաղաք Հրազդան
21.6.	ջրի վթարային ծառայություն (ըստ բնակավայրերի)	Քաղաք Հրազդան
21.7.	կոմունալ վթարային ծառայություն (ըստ բնակավայրերի)	Քաղաք Հրազդան
19.	Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	Qaxsi.kotayk@mail.ru
20.	Համայնքանցային պաշտոնական կայքի հասցեն	Qaxsi.am
21.	Համայնքապետարանի հեռախոսահամարը	098910-932
22.	Համայնքի փոստային դասիչները	2318

Քաղաքի համայնքի ԱՌԿ համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով համայնքի ղեկավարի 2020թ. մարտի 24 N38 որոշմամբ ստեղծվել է ԱՌԿ խորհուրդը և ղեկավար է նշանակվել համայնքի ղեկավարը:

Համաձայն վերոնշյալ որոշման նշանակվել են տարահանման և պատասպարման, ազդարարման և իրազեկման, հրշեջ-փրկարարական աշխատանքների, հասարակական կարգի պահպանման, տրանսպորտային ապահովման, կապի և տեղեկատվության փոխանակման, բժշկական օգնության կազմակերպման, կենսաապահովման կազմակերպման, էներգետիկ ապահովման, ինժեներական միջոցառումների, կոմունալ ապահովման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման, անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատուներ:

Համայնքում խոշոր աղետների ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպումն իրականացվում է ԱՌԿ խորհրդի կողմից, որի տեղակայման մշտական վայրը համարվում է համայնքապետարանը: Համայնքապետարանից բնակչության պաշտպանության կառավարումն անհնար լինելու դեպքում, ԱՌԿ խորհրդի ղեկավարի (համայնքի ղեկավարի) որոշումով տեղակայման մշտական վայրը փոխվում է, որի մասին նախապես տեղեկացվում են ԱՌԿ խորհրդի անդամները: ԱՌԿ պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու դեպքում՝ ԱՌԿ պլանը համարվում է գործողության մեջ դրված: Նախատեսվում է տարին երկու անգամ հրավիրել ԱՌԿ խորհրդի նիստ (ԱՌԿ միջոցառումների պլան-ժամանակացույց՝ հավելված 3): ԱՌԿ խորհրդի նիստերն արձանագրվում են (Ձև N 4) և կցվում ԱՌԿ պլանին:

III ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆԱԶԵՑՈՒՄ

3.1 Համայնքի ընդհանուր վտանգների, խոցելիության նկարագրություն, դրանց բացասական հետևանքները և հնարավոր լուծումները

Համայնք/ Բնակավայր	Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4	5
Երկրաշարժ				
Քաղսի	Համայնքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում: Քաղսի համայնքում (Քաղսի բնակավայր) կանխատեսվում է երկրաշարժ՝ 9 բալ առավելագույն հորիզոնական արագացմամբ:	Մարդիկ՝ 2530, որից տղամարդ՝ 1392, կին՝ 1138, երեխա-666, շենք-շինություններ՝ 25, բազմաբնակարան շենքեր-1 միավոր, բնակելի տներ-559 միավոր և ոչ բնակելի-47, կենդանիներ՝ 1414 գլխաքանակ, ենթահամակարգեր, հրդեհավտանգ՝ 2 օբյեկտ, պայթյունավտանգ՝ 2 օբյեկտ, ջրամբարներ՝ 1	Երկրաշարժը կարող է դառնալ մարդկային և նյութական կորուստների, երկրորդային երևույթների (հրդեհներ, պայթյուններ, սողանքներ, ջրամբարի առաջացման պատճառ: Ուժեղ երկրաշարժի դեպքում համայնքում ցածր սեյսմակայունության ու վթարային շենք-շինություններում տեղի կունենան մասնակի կամ ամբողջական փլուզումներ: 9 բալի դեպքում հատուկ նախագծով կառուցված շենքերում մասսվածքները - կլինեն թեթևակի, տիպայինում՝ նշանակալի, վատ կառույցներում տեղի	☐ Բնակչության իրազեկվածության բարձրացում: ☐ Կամուրջների ամրացում: ☐ Բնակավայրերում շենքերի և շինությունների կառուցման և շահագործման հետ կապված սեյսմիկ անվտանգության պահանջների տարածում:

				կունենան ավերվածություններ:	☐
Գետի վարարում (հեղեղում)					
Քաղսի	Գետերը հիմնականում վարարում են գարնանը, մասամբ՝ աշնանը, նվազագույն մակարդակ դիտվում են հուլիս-օգոստոսին և ձմռանը:	Ափամերձ մշակվող հողատարածքներ, խոտհարքներ, ցանքատարածություններ, գյուղամիջյան և միջոցաշտային ճանապարհներ, կամուրջներ, տնամերձ տարածքներ և այգիներ, կենդանիներ, մարդիկ:	Հեղեղումը դառնում է կամուրջների, ճանապարհների քանդման կամ վնասման, հողերի լվացման, ցանքատարածքների վնասման, բերքի կորուստի պատճառ: Հեղեղման հետևանքով որոշ տարածքներ ջրածածկվում են:	☐ Գետի ափերի պաշտպանիչ հատվածի բարձրացում, ավելացում, մասնավորապես՝ ջրածածկվող տարածքների երկայնքով կամ ափապաշտպան պատնեշների կառուցում: ☐ Գետերի վրա գտնվող վթարային կամուրջների ամրացում կամ ապանոցառում և նորի կառուցում: ☐ Բնակչության իրազեկվածության բարձրացում : ☐ Վտանգված ճանապարհահատվածների շրջանցիկ ճանապարհների կառուցում:	
Երաշտ					
Քաղսի	Երաշտը շատ հաճախ տեղումների սակավության կամ ոռոգման պակասի հետևանք է: Մայիս-հունիս ամիսներից սկսած կարող են դիտվել սակավաջրության հետ	Ցանքատարածքներ, ցանքեր, այգիներ, խոտհարքներ, անասնապահություն:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար, նյութական կորուստներ հողագործության, անասնապահական ոլորտներում:	☐ Բնակչությանը հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում և իրազեկում: ☐ Ոռոգման ցանցի բարելավում, ընդլայնում: ☐ Նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի ներմուծում:	

	կապված երեւոյթներ, ինչը երաշտը դարձնում է անխուսափելի: Բերքի կորուստը պայմանավորված է նաև ընդհանուր ոռոգման ցանցի բացակայությամբ: Համայնքում հողագործությունը նվազել է, մշակվում և ոռոգվում են հիմնականում տնամերձ տարածքները, որտեղ մշակվում են բանջարաբուստանային կուլտուրաներ: Համայնքի մշակվող հողերի մեծ մասը անցրդի են: Երաշտային տարիներին, ջրի սակավության պատճառով մեծանում է վարակիչ հիվանդությունների հավանականությունը:		Մեծանում է գյուղատնտեսական կենդանիների շրջանում վարակիչ հիվանդությունների, մշակաբույսերի ոչնչանալու հավանականությունը դառնում է սակավաջրության պատճառ:	
Քաղսի	Համայնքին բնորոշ է վաղ ցրտհարություն, հատկապես՝ ապրիլ, մայիս, հունիս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին:	Սյգիներ, բանջարաբուստանային որոշ կուլտուրաներ, բերք:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ:	☐ Բնակչությանը հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում և իրազեկում: ☐ Նոր տեխնոլոգիաների և մշակաբույսերի կիրառում: ☐ Բնակչության իրազեկում ցրտահարությունից

					պաշտպանելու միջոցների, ձևերի վերաբերյալ:
Քարաթափում					
Քաղսի	Բնակավայրերում առկա են քարաթափման վտանգներ:	Մարդիկ, բնակելի տներ, ճանապարհներ	Քարաթափման տեղամասերը սպառնալիք են բնակելի տների և ճանապարհների փակման համար:	☐ Քարաթափման հատվածների մասնագիտական հետազոտում, հնարավորության դեպքում իրականացնել արհեստական քարաթափում: ☐ Վտանգի մասին բնակչության վաղ իրազեկում: ☐ Ճանապարհներին փակցնել քարաթափման վտանգի մասին զգուշացնող նշաններ:	
Չնաբույք					
Քաղսի	Համայնքին բնորոշ առատ ձյունը և ուժեղ քամիները պատճառ են դառնում ձնաբույքի, ինչի հետևանքով իմնականում խցանվում են միջհամայնքային ճանապարհները: Ճանապարհի խցանումը դառնում է լրացուցիչ խնդիրների առաջացման պատճառ:	Ճանապարհներ, էլեկտրահաղորդակցում	Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների խցանում: Էլեկտրամատակարարման խափանում:	☐ Հուսալի օդերևույթաբանական տեղեկատվության ապահովում:	

Առատ ծյուն				
Քաղսի	Համայնքին բնորոշ առատ ծյունը, ինչի հետևանքով հիմնականում խցանվում են միջհամայնքային ճանապարհները: Ծանապարհի խցանումը դառնում է լրացուցիչ խնդիրների առաջացման պատճառ:	Բնակելի տներ, շենք-շինություններ, ճանապարհներ	Բնակելի տների, շենք-շինությունների փլուզման պատճառ, ներհամայնքային ճանապարհների խցանում:	☐ Հուսալի օրերնությունների փլուզման տեղեկատվության ապահովում: ☐ Ձմեռվաընթացքում համապատասխան տեխնիկայի ձեռքբերում:
Հորդառատ տեղումներ				
Քաղսի	Համայնքին բնորոշ են հորդառատ տեղումները, հատկապես՝ ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին	Բերք: Բանջարաբուստանային կուլտուրաներ: Խոտ: Ներհամայնքային ճանապարհներ: Բնակելի տներ: Տնամերձ հողատարածքներ:	Առատ տեղումները դառնում են սելավների առաջացման, գետի վարարման և հեղեղումների պատճառ: Հորդառատ անձրևների ժամանակ ակտիվանում են համայնքում առկա սողանքային երևույթները: Առատ տեղումները խոցվողություն են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը: Տեղումների պատճառով դժվարանցանելի են դառնում նաև ներհամայնքային ճանապարհները: Կարող է դառնալ բնակելի տների, շենք-շինությունների փլուզման պատճառ:	☐ Մշակել և կիրառել կանխատեսման և վաղիքագեղման համակարգ: ☐ Ապահովել բնակչության վաղ իրազեկումը: ☐ Ծանապարհների եզրերին հեղեղառների կառուցում և ճանապարհների բարեկարգում:

Կարկուտ				
Քաղսի	Կարկտահարությունների պատճառով բերքի կորուստները բնականայնորում հասնում են 50-60%:	Այգիներ, ցանքատարածքներ, ցանքեր, բերք, ընտանի կենդանիներ, շինություններ, տրանսպորտային միջոցներ:	Վնասվում կամ ամբողջովին ոչնչացվում է բերքը, ցանքատարածքները, կոտրվում շինությունների ապակիները և տանիքածածկերը, վնասում տրանսպորտային միջոցները: Բերում է էական նյութական կորուստներ:	☐ Առաջարկել բնակիչներին ձեռք բերել և օգտագործել հակակարկտային ցանցեր: ☐ Կանխատեսման և վաղ ազդարարման համակարգի մշակում և կիրառում:
Ուժեղ քամիներ				
Քաղսի	Ուժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում բնակավայրերին:	Բնակելի տներ, շենք-շինություններ, էլեկտրահաղորդակցման համակարգ, ցանքատարածքներ, այգիներ, հողեր	Պարբերական բնույթ կրող ուժեղ քամիները առավել շատ վնասում են էլեկտրասյուները և էլեկտրալարերը: Վնասվում են նաև բնակելի տների և շենք-շինությունների տանիքածածկերը, լուսամուտները: Քամիները մեծ վնասներ են պատճառում նաև գյուղատնտեսական դրոշմին: Ամառ-աշուն ժամանակահատվածի քամիները մեծ վնաս են հասցնում այգիներին, հատկապես պտղատու և մրգատու՝ դառնալով բերքի թափման պատճառ:	☐ Մշակել կանխատեսման և վաղազդարարման համակարգ և կիրառել: ☐ Ապահովել բնակչության վաղ իրազեկումը: ☐ Առաջարկել այգիների երկանքով պաշտպանիչ շերտի կառուցում-տեղադրում (բնական կամ արհեստական մնտառաշերտ, պաշտպանիչ ցանկապատներ):

Սելավ			
Քաղսի	Գարնանը և աշնանը առատ տեղումների ժամանակ առաջացած սելավային հոսքերը՝ հեղեղատարների բացակայության պատճառով, հոսում են գյուղամիջյան ճանապարհներով, վնասելով դրանք, լցվում տնամերձ հողամասեր, տան նկուղներ:	Մարդիկ, կենդանիներ, Ներհամայնքային ճանապարհներ, տնամերձ տարածքներ, նկուղներ, ցանքատարածքներ	Համայնքի ճանապարհների, կամուրջների, տների, տնամերձերի, գոմերի և ցանքատարածքների վնասում: Հողերի լվացում, քայքայում:
☐ Սելավատարների կառուցում: ☐ Սելավատարների մաքրում: ☐ Սելավատարների հունի լայնացում և խորացում:			
Ջրհեղեղ			
Քաղսի	Գարնանը և աշնանը առատ տեղումների պատճառով առաջանում է ջրհեղեղ: Բնակավայրերում ջրածածկման վտանգները դիտարկված են «Գետերի վարարում» և «Ջրանբարի պատվարի վթար» բաժիններում:	Ներհամայնքային ճանապարհներ, տներ, տնամերձ տարածքներ	Ներհամայնքային ճանապարհների, տների, տնամերձ տարածքների վնասում:
☐ Ջրահեռացման ցանցի կառուցում: ☐ Ջրահեռացման ցանցերի մաքրում:			
Ջրածածկում			
Քաղսի	Գարնանը և աշնանը առատ տեղումների ժամանակ որոշ հատվածներում առաջանում է ջրածածկում: Բնակավայրերում ջրածածկման	Ներհամայնքային ճանապարհներ, տնամերձ տարածքներ, նկուղներ, ցանքատարածքներ	Համայնքի ճանապարհների, տների, տնամերձերի, գոմերի և ցանքատարածքների վնասում: Հողերի լվացում, քայքայում:
☐ Ջրահեռացման համակարգի կառուցում: ☐ Ջրահեռացման համակարգի մաքրում:			

	վտանգները դիտարկված են «Գետերի վարարում» և «Ջրամբարի պատվարի վթար» բաժիններում:			
Ջրամբարի պատվարի վթար				
Քաղսի	Ջրամբարի պատվարի փլուզման դեպքում համայնքի նշված բնակավայրերը կհայտնվեն ջրածածկման գոտում	Համայնք՝ մարդիկ, կենդանիներ, շենք-շինություններ, ներհամայնքային ճանապարհներ, տնամերձ տարածքներ, ցանքատարածքներ	Նյութական և մարդկային կորուստներ	☐ Մշակել և կիրառել կանխատեսման և վաղ ազդարարման համակարգ: ☐ Ապահովել բնակչության վաղ իրազեկում: ☐ Համայնքապետարանի աշխատակիցների և համայնքային արձագանքող ստորաբաժանումների արագ արձագանքման խմբերի ձևավորում:
Անտառային հրդեհներ				
Քաղսի	Անտառային շրջ եղանակին, ինչպես նաև կայծակների հետևանքով կամ մարդկանց ոչ ճիշտ գործողությունների արդյունքում կարող են առաջանալ անտառային հրդեհներ	Անտառներ, խոտածածկ տարածքներ, կենդանիներ, բուսականություն	Կենդանիների և բույսերի ոչնչացում, աննեռացում, հողի բերքատվության նվազում, երոզիա:	☐ Կազմակերպել հակահրդեհային քարոզչության լայնամասշտաբ իրականացումը, մամուլով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ անտառների պահպանման, հրդեհային անվտանգության հարցերի պարբերական լուսաբանումները: ☐ Բնակչության իրազեկում՝ անտառ հաճախելու ժամանակ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ:

խոտաճածկ տարածքների հրդեհներ

Քաղսի	Ամառային շոգ եղանակին կամ մարդկանց ոչ ճիշտ գործողությունների հետևանքով կարող են առաջանալ խոտաճածկ տարածքների հրդեհներ	Անտառներ, խոտաճածկ տարածքներ, կենդանիներ, բուսականություն	Կենդանիների և բույսերի ոչնչացում, անհետացում, հողի բերքատվության նվազում, կրոզիա:	☐ Բնակչության իրազեկում՝ դաշտերում և այլ խոտաճածկ տարածքներում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ: ☐ Բարձրացնել բնակչության գիտելիքների մակարդակը երաշտի հետևանքով բուսաճածկ տարածքներում հրդեհի առաջացման վտանգի և դրա կանխարգելման մասին:
Համաճարակային բռնկում				
Քաղսի	Ձմռան-գարնան ամիսներին ակտիվանում են սուր շնչառական վարակների սեզոնը: Անոան ամիսներին ակտիվանում են աղիքային վարակիչ հիվանդությունները:	Մարդիկ	Կյանքի և առողջության սպառնալիք:	☐ Խմելու ջրի որակի բարձրացում և պահպանում: ☐ Կանխարգելիչ միջոցառումների իրականացում: ☐ Ուսումնական հաստատություններում և մանկապարտեզներում սանիտարական կանոնների պահպանում:
Անասունների հիվանդություններ				
Քաղսի	Ժամանակ առ ժամանակ բնակավայրերում ակտիվանում են գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններ	Անասուններ, մարդիկ	Կյանքի և առողջության սպառնալիք, անասունների կորուստ:	☐ Ժամանակին պատվաստումների կատարում: ☐ Պրոֆիլակտիկ միջոցառումների իրականացում: ☐ Բնակչության իրազեկում:

Բույսերի հիվանդություններ				
Քաղսի	Բնակավայրերում ցանքատարածություններում և այգիներում նկատվում են բույսերի հիվանդություններ	Մշակվող հացահատիկ, բանջարաբուստանային բուսատեսակներ	Բերքի նվազում, կորուստ, նյութական կորուստ	☐ Համակարգված պայքարամիջոցների կիրառում: ☐ Բնակչության իրազեկում:
Հրդեհներ/Պայթյուններ				
Քաղսի	Համայնքում առկա գազալցակայանում, բենզալցակայանում և բնակելի տներում հրդեհային կանոնների խախտման հետևանքով կարող են լինել հրդեհներ/պայթյուններ:	Մարդիկ, բնակելի տներ, բազմաբնակարան շենքեր, դպրոցներ, մանկապարտեզներ և այլ շինություններ:	Նյութական և մարդկային կորուստներ:	☐ Համայնքային ենթակառուցվածքում գտնվող կառույցներում պահպանել հրդեհային անվտանգության կանոնները : ☐ Բնակավայրերում՝ բնակչությանը առաջարկել օգտագործել միայն տեխնիկական լավ վիճակում գտնվող գազի բարձրներ:

Համայնքի կարողությունների նկարագրություն Աղյուսակ 3
3.2

Հ/հ	Կարողություն	Վտանգ																		
		Լրիվաշարժ	Գարկուտ	Երաշտ	ճյուղաբաժանում	Քաղաքային հողեր	Անտառային հողեր	Խտածածկ տարածքներ	Խտածածկ տարածքներ	Առանձին	Ձևաքար	Հորատառ տեղումներ	Գետի վարարում, հեղեղումներ	Սնունդ	Հողեր	Համայնք	Սնունդ	Լրիվաշարժ		
Խոցելիություն																				
Մարդկային և կառուցվածքային ռեսուրսներ																				
	Մարդկային ներուժ	x								x	x					x				
	Համայնքապետարանի շենք	x																		
	Բնակավայրում վարչական շենք	x																		
	Դպրոց	x																		
	Մանկապարտեզ	x																		
	Մարզադահլիճ	x																		
	Մշակույթի տուն	x																		
	Հիվանդանոց (բուժկետ)	x																		
	Խանութ	x																		
	Հացի փուռ	x																		

Եկեղեցիներ															
Խոշոր և մանր եղջերավոր անասուններ	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
Խմելու ջրի ցանցի առկայություն	x														
Ոռգման ներհամայնքային ցանցի առկայություն	x														
Կազմակերպված աղբահանություն															
Քնական ռեսուրսներ															
Անտառի առկայություն	x							x							
Գետի առկայություն	x														
Բջջային հեռախոսակապ	x									x					
Ինտերնետ	x														
Տրանսպորտային և տեխնիկական միջոցներ՝															
—136__ մարդատար մեքենաներ,	x														
2__ ավտոբուսներ,	x														
5__ մկրտավտոբուսներ,	x														
2__ էքսկավատորներ,	x														
1__ ավտոաշտարակ,															
5__ ինքնաթափ բեռնատար մեքենաներ,	x														
2__ թրթուրավոր տրակտորներ,	x														
Համագործակցություն															
Հրշեջ/փրկարարական ծառայություն	x														

4.1 Ազդարարման կազմակերպում

Համայնքի ԱՌԿ խորհրդի ազդարարումը իրականացվում է համաձայն ազդարարման սխեմայի (հավելված 4): Ազդարարման ժամանակ, երբ հաղորդվում է «Հավաք» այս դեպքում բոլոր՝ ԱՌԿ խորհրդի անդամները (բացառությամբ բնակավայրերի ղեկավարների) ներկայանում են համայնքապետարան կամ նախապես որոշված վայր: Ոլորտային պատասխանատուները ստանալով ազդարարում և «Հավաք», նույնը փոխանցում են ենթակա անձնակազմին, որոնք ներկայանում են իրենց աշխատավայրեր:

Ազդարարում իրականացնելն անհնար լինելու և ԱՌԿ-ի ակնհայտ հետևանքների առկայության դեպքում ԱՌԿ խորհրդի անդամները, բացառությամբ բնակավայրերի ղեկավարների), ոլորտային պատասխանատուները, համայնքապետարանի աշխատակիցները և արձագանքող ստորաբաժանումների անձնակազմերը ներկայանում են համապատասխան վայրեր: Ուժեղ երկրաշարժի ցնցումները զգալով կամ տեսնելով ավերվածություններ կամ այլ աղբյուրներից տեղեկանալով աղետի մասին յուրաքանչյուր ոք չազդարարվելու դեպքում, եթե չկան անձնական բնույթի խոչընդոտող հանգամանքներ (վիրավորվածություն, ընտանիքի անդամների վիրավորվածություն կամ կորուստ), կապ է հաստատում իր ստորաբաժանման ղեկավարի հետ կամ ժամանում է աշխատավայր:

Ազդարարումը արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտագործվում են կապի առկա բոլոր միջոցները՝ ստացիոնար, բջջային, ուղիղ կապի գծերը և հատուկ ռադիոկապի միջոցները:

Բնակչության ազդարարումը կատարվում է շյանների միջոցով, ինչպես նաև օգտագործվում են բարձրախոսներ:

Բնակավայրերի ղեկավարները ապահովում են իրենց բնակավայրի ազդարարումը:

Առնտայի ջրածածկման վտանգի դեպքում միացվում են էլեկտրաշահանքները և տրվում է անընդհատ երկարատև (3 ժամ տևողությամբ) ձայնային ազդանշան, որը հրահանգ է կառավարման մարմիններին, ծառայություններին, ուժեղին և բնակչությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար: Բնակչությունը պարտավոր է աշխատանքային վիճակի բերել տեղեկատվության հնարավոր բոլոր միջոցները: «Քիմիական տագնապ» ազդանշանը տրվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով, այդ թվում՝ շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ: Կապի միջոցներով 2-3 ժամ տևողությամբ տրվում է տեքստային հաղորդագրություն. «Ուշադրություն, ուշադրություն քիմիական վտանգ»: Հաղորդագրությունը լրացվում է «Վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին՝ Բաղսի համայնքին»: Տրվում է տեղեկություն վտանգավոր նյութի անվան շարժման ուղղության, բնակավայրերին մոտենալու ժամանակահատվածի և այլ տարածքներում ռադիացիայի հնարավոր չափաբաժնի վերաբերյալ, որին հետևում են հանձնադարավաններ բնակչության գործողությունների մասին:

4.2 Իրազեկման կազմակերպում

Արտակարգ իրավիճակի վերաբերյալ բնակչության իրազեկումն իրականացվում է մարդկանց մոտ անհիմն մտքերի հետևանք հանդիսացող անհանգստության և խոսակցությունների ու բանբասանքի արդյունքում ստեղծված հասարակական քաոսի առաջացումը կանխարգելելու, իրատապ միջոցառումներ (տարահանում, պատասխարում, անհատական պաշտպանական միջոցների ապահովում) իրականացնելու և սուժաձևերին նորմալ կյանքի վերադարձնելու գործում աջակցելու համար: Համայնքը իրականացնում է բնակչության իրազեկման գործընթացը՝ կիրառելով ձեռքի տակ եղած բոլոր միջոցները, իսկ անհրաժեշտության դեպքում համագործակցում է շահագրգիռ պետական կառավարման համակարգի մարմինների և լրատվական կազմակերպությունների հետ:

4.3 Տեղեկատվության հավաքման և հաղորդման կազմակերպում (Իրավիճակի գնահատում)

Յուրաքանչյուր արտակարգ իրավիճակից հետո իրականացվում է վնասի ծավալների մասին տեղեկատվության հավաք և հաղորդում շահագրգիռ պետական կառավարման համակարգի մարմիններին և կազմակերպություններին:

Յուրաքանչյուր բնակավայրի վարչական օպերատոր հավաքագրում է իր բնակավայրում տեղի ունեցած իրավիճակի մասին տեղեկատվություն և հաղորդում է ԱՌԿ խորհրդին՝ բոլոր հնարավոր միջոցներով: Տեղեկատվության հաղորդման միջոցների բացակայության դեպքում, հույժ կարևոր (մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող տեղեկատվություն) տեղեկատվությունը սուբհանդակի միջոցով այն հասցվում է ԱՌԿ խորհրդին: Ավետներից անմիջապես հետո ստացված տեղեկատվությունը՝

Դասակարգում	Տեղեկատվության բովանդակությունը	Հավաքման միջոցները
Մարդկային կորուստներ	- Չոհների և վիրավորների թիվը, - սուժաձևերի վիճակը, - նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների անձնակազմի և սաների շրջանում գոռերը, վիրավորները և սուժաձևերի վիճակը, - տարահանման անհրաժեշտությունը և տարահանման վիճակը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում	- վնասների գնահատումը՝ ԱՌԿ խորհրդի անդամների կողմից շրջակա տարածքի վիզուալ դիտման արդյունքների, - երկրորդային վտանգների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ստացված ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուների կողմից, - ԱԻ մարմիններից և ծառայություններից ստացված հաղորդագրությունները,
Բնակչության կյանքին սպառնացող երկրորդային վտանգները	- երկրորդային վտանգների տեսակները և հնարավոր հետևանքները - երկրորդային վտանգների տեսակները և հնարավոր հետևանքները նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում	- հաղորդագրությունները՝ ստացված երթևեկության մեջ գտնվող վարորդներից և ուղևորներից - (համայնքային ակտիվություններ, երթուղային տաքսիներ և այլ)
Նյութական վնասներ	- պետական կառույցների վնասների չափը, - նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կառույցների վնասների չափը, - երթևեկի ճանապարհներին և կամուրջներին հասցված վնասները,	- հեռուստատեսությամբ և ռադիոյով տրամադրվող տեղեկատվությունը

	- կառույցների և շինությունների փլուզման իրավիճակը, - փլուզումները և դրանց առաջացման վտանգները, - էլեկտրալարերին, գազատար, ջրատար խողովակներին և հեռախոսային կապին հասցված վնասները	- հաղորդագրությունները՝ ստացված բնակչությունից և տարրեր կազմակերպություններից
Այլ	- Արագ արձագանքման իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը	

4.4 Բնակչության տարահանման կազմակերպում

Տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:

Տարահանումն իրականացվում է այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ: Տարահանման նպատակն է հնարավոր մարդկային, կենդանիների, նյութական և մշակութային կորուստների կանխումն ու նվազեցումը:

Համայնքի բնակչության տարահանումն իրականացվում է երկրաշարժի, սողանքի, սելավի, փլուզման, ջրամբարների պատվարների փլուզման, պոչամբարի պատվարի փլուզման, գետերի ջրերի հորդացման հետևանքով ջրածածկման, պայթյունի, հրդեհի, ՀՀ վրա գինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում, իսողալ պայմաններում հակառակորդի ուղիղ կրակի դեպքում և այլն:

Անվտանգ տարածքում տարահանվող բնակչության համար որպես ժամանակավոր կացարաններ օգտագործվում են չվնասված դպրոցները, ակումբները, կուրանոցները, հանրակացարանները, բնակելի տները՝ անկախ սեփականության ձևից: Նշված ժամանակավոր կացարանների տրամադրումն իրականացվում է համարժեք փոխհատուցմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տարահանում կարող է իրականացվել բնակչության պաշտպանության մյուս ձևերի հետ համատեղ, այն ուղեկցվում է բնակչության պատասխանամբ, անհատական պաշտպանական միջոցների ապահովմամբ: Բնակչության տարահանման մասին որոշումն ընդունում են քաղաքի համայնքի ղեկավարը, իսկ նրան բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրան փոխարինող անձը: Համայնքի ղեկավարը որոշում ընդունելուց առաջ կամ հետո ընդունված որոշման մասին տեղեկացնում է համայնքում առկա պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումներին, ինչպես նաև և զեկուցում է մարզպետին: Համայնքի ղեկավարը նաև որոշում է տարահանման ժամկետները (սկիզբը, ավարտը) ձևը (հետիոտն շարայություններով, տրանսպորտային միջոցներով) և այլն: Եթե բնակավայրերի և համայնքապետարանի միջև կապը բացակայում է ու բնակավայրում անհրաժեշտություն է առաջանում իրականացնել բնակչության տարահանում, ապա տարահանման որոշումը կայացնում է բնակավայրի վարչական ղեկավարը՝ առաջին իսկ հնարավորության դեպքում հաղորդելով Համայնքի ղեկավարին:

Բնակչության տարահանումը նախատեսվում է իրականացնել հետիոտն շարայություններով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարայություններով: Հիմնականում որպես տարահանման նախնական հավաքման կետ ընտրված են բնակավայրերի ուսումնական հաստատությունները, որտեղ իրականացվում է բնակչության հավաք, հաշվառում, այնուհետ տարահանում տվյալ դեպքի համար ընտրված անվտանգ տարածք: Երկրաշարժի դեպքում

բնակչությունը նախապես հավաքվում է ուսումնական հաստատությունում, որտեղ իրականացվում է փրկվածների, տուժածների, կորածների մասին տեղեկատվության հավաքագրում: Հավաքված բնակչությունից հավաքագրվում է նաև ճանապարհների և առաջացած երկրորդային խոցման գործոնների մասին տեղեկատվությունը:

Այնուհետ համայնքի ղեկավարի որոշմամբ տարահանվողները կարող են շարունակել մնալ ուսումնական հաստատության տարածքում կամ տեղափոխվել նախապես որոշված տարահանման հավաքատեղի:

Ուժեղ երկրաշարժից հետո բնակչությունը վտանգավոր և խոցելի տարածքներից տարահանվում են բնակավայրի անվտանգ տարածքներ: Ուժեղ երկրաշարժի դեպքում վտանգավոր և խոցելի տարածքներից բնակչության տարահանումը իրականացվում է հետիոտն շարասյուններով:

Ջրամբարի և պոչամբարի պատվարների փլուզման դեպքում տարահանումը, որի ժամանակ ստանալով ազդանշանը բնակչությունը անմիջապես տարահանվում է նախապես որոշված անվտանգ տարածքներ առանց հավաքակետ ժամանելու, քանի որ ժամանակի սղության պատճառով անհրաժեշտ է իրականացվում է հետիոտն շարասյուններով և տրանսպորտային միջոցներով:

ՀԱԷԿ-ի՝ ՆՊՄԻ ու ՇՊՄԻ գոտիների բնակչության տարահանումը իրականացվում է տրանսպորտային միջոցներով բնակիչների տներից: Ազդանշանը ստանալուց հետո բնակչությունը պատսպարվում է՝ իրենց տներում, նկուղներում կամ ձեռնահարկում՝ կախված արտանետված նյութի առանձնահատկությունից, հերմետիկացնում այն և սպասում տարահանման տրանսպորտին:

Տարահանումը հաջող իրականացնելու, ինչպես նաև առաջիկա ժամանակահատվածում բնակչության և բնակավայրերի հոգսերը թեթևացնելու համար տարահանվողները նախապես պետք է իրազեկված փնեն տարահանման կանոններին, իրենց հետ վերցնելով փաստաթղթերի, նյութական արժեքների և մաքուր խմելու ջրի և որոշակի սննդի պաշարների մասին: Այս ամենը պետք է փնի նախապես պատրաստված և պահանջի մատչելի վայրում:

Տարահանման և պատսպարման պատասխանատուն բնակչության տարահանման կազմակերպման ժամանակ պետք է համագործակցի ավտոտրանսպորտային կազմակերպությունների, Ոստիկանության և ճանապարհային ոստիկանության հետ հասարակական կարգի և անվտանգ երթևեկության կազմակերպման նպատակով, ավտոշարասյունների և հետիոտն շարասյունների կարգավորված հոսքի ուղղորդման և այլ հարցերով:

Բնակչության տարահանման ժամանակ գործողության մեջ են դրվում սույն պլանի հավելված N 5-ը և հավելված N 6-ը:

Երկրաշարժից դեպքում տարահանման կետերի որոշումը.

Ուշագրքը	Տարածքային կետ	Տեսակներ	Բնակավայրի օգտագործման ժամանակահատվածը
1 փուլ	Տարահանման կետ	Ժամանակավոր տեղաբաշխման կետեր	Ակամ մի քանի ժամից մինչև 1 օր
2 փուլ	Տեղաբաշխման կետեր	Երկարատև բնակության վայրեր, կացարաններ, (բազմաբնակարանային շենքեր, սեփական տներ)	Աշտական բնակավայրով ապահովմամբ (մինչև 1 տարի)
Աշտական բնակության վայրը	Հիմնական բնակավայրը	Բազմաբնակարանային շենքեր, սեփական տներ	

4.5 Բնակչության պատսպարման կազմակերպում

Համայնքի բնակչության պատասպարում իրականացվում է հետևյալ դեպքերում՝

- ուժեղ քամիների,
 - կարկուտի,
 - կայծակի/ամպրոպի,
 - ատոմակայանի ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի (ճառագայթային ազդեցության և ճառագայթային աղտոտման տարածքներ), վտանգավոր թունավոր նյութեր արտադրող կամ արտադրական պրոցեսում դրանք օգտագործող արդյունաբերական օբյեկտներում վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի,
 - ուղիղակիորեն կամ թունավոր նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի,
 - ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում և այլն):
- Կազմակերպություններում, այդ թվում նախադպրոցական և հանրակրթական հաստատություններում անձնակազմին և երեխաներին պատասպարում են նկուղներում (նկուղների հարմարեցում):

4.6 Բնակչությանը անհատական պաշտպանական միջոցների ապահովման կազմակերպում

Անհատական պաշտպանության միջոցների բացակայության դեպքում, բնակչությանը իրազեկման միջոցով կտրամադրվի տեղեկատվություն մաշկի պաշտպանության հասարակ միջոցների մասին, մասնավորապես՝ որպես մաշկի պաշտպանության հասարակ միջոցներ, կարող են հարմարեցվել տվյալական հագուստը, մարզահագուստները (սպորտային կոստյումները) և կոշիկները, որոնք ենթարկվում են հերմետիկացման: Ցանկացած մարզահագուստ, ռետինե կոշիկներ և ձեռնոցներ կարող են դառնալ պաշտպանական գտող լրակազմ, եթե դրանք նախօրոք հագեցվեն հատուկ բաղադրությամբ: Այդ նպատակով կիրառվում են զանազան լվացող միջոցների լուծույթներ և օժառայողային էմուլսիաներ: Մաշկի պաշտպանության հասարակ միջոցներն օգտագործվում են հակազազերի հետ զուգորդված՝ ճառագայթային փոշիներից և մանրէաբանական միջոցներից, իսկ քիմիական լուծույթներով հագեցնելուց հետո նաև մարտական թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

Համայնքը բնակչությանն ուսուցանում է սեփական ուժերով շնչառական օրգանների պաշտպանության հասարակ միջոցների պատրաստման ու մաշկի պաշտպանության համար հագուստի հարմարեցման և դրանցից օգտվելու հնարքները:

4.7 Ուժերի և միջոցների պատրաստվածության բերում

Աշխատանքային և օպերատիվ խմբերը բերվում են պատրաստվածության, անհրաժեշտության դեպքում իրականացվում է օպերատիվ խմբերի տեղաշարժ դեպի դեպքի վայրեր և իրականացվում է շուրջօրյա հերթապահություն:

Աշխատանքային և օպերատիվ խմբերի կազմը որոշվում է ԱՌԿ խորհրդի կողմից: ԱՌԿ խորհրդի որոշմամբ համայնքի փրկարարական և որոնողափրկարարական խմբերը բերվում են բարձր պատրաստվածության:

Օպերատիվ խմբերը հասնելով դեպքի վայր (խոշոր աղետի դեպքում՝ համայնքապետարան)՝ անմիջապես կապ են հաստատում ԱՌԿ խորհրդի և ԱԽՆ ՓԾ ՄԲՎ հետ:

Ստեղծված աշխատանքային խմբերը հասնելով համայնքապետարան իրականացնում են.

- Տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաք, ընդհանրացում վերլուծություն՝ ստեղծված իրավիճակի, ուժերի և միջոցների պատրաստվածության պատրաստվածության վերաբերյալ:

- Տրուած համայնքներում ստեղծված իրավիճակի, ուժերի և միջոցների պատրաստվածության վերաբերյալ զեկուցների պատրաստում և ներկայացում՝ ԱՌԿ խորհրդին և ԱԽՆ ՓԾ ՄԲՎ-ին:

- Արձագանքման ռեժիմին անցնելու վերաբերյալ՝ որոշման ընդունման համար առաջարկությունների ներկայացում:

Արձագանքման ռեժիմին անցնելու կարգ.

Աշխատանքային ժամերին՝ «Ժ»+1, ոչ աշխատանքային ժամերին «Ժ»+2 իրականացվում է ԱՌԿ խորհրդի և համայնքի ոլորտային պատասխանատուների հավաք: ԱՌԿ խորհրդի նախագահի որոշմամբ իրականացվում է խորհրդի անդամների ժողով՝

- խորհրդի որոշմամբ պատրաստվում է առաջարկություն համայնքի ղեկավարին՝ արձագանքման ռեժիմի անցման վերաբերյալ:

- համայնքի ղեկավարի որոշմամբ իրականացվում է անցում արձագանքման ռեժիմին:

- խորհրդի ղեկավարի որոշմամբ կառավարման ուժերն ու միջոցները բերվում է բարձր պատրաստվածության:

4.8 Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում

Մարդկանց նյանքի փրկման աշխատանքներին զուգահեռ իրականացվում են անհետաձգելի վթարավերականգնողական և կենսագործունեության վերականգնման (կասկի համակարգերի, զազանատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման վերականգնման և այլն) աշխատանքներ: Անհետաձգելի միջոցառումները կկազմակերպվեն այնպես, որ հնարավորինս արդյունավետ օգտագործվեն չտուժած մարդկային ուժերը և նյութական միջոցները: Արձագանքման միջոցառումներին կներգրավվեն նաև մոտակա չտուժած համայնքների և կազմակերպությունների մարդկային ուժերը, տեխնիկան և նյութական միջոցները:

Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները պատշաճ և լիարժեք կազմակերպելու համար իրականացվում է կարիքների գնահատում (փրկարարական խմբերի, հատուկ տեխնիկայի և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կատարող կամավորական խմբեր:

4.9 Հրդեհաշիջման կազմակերպում

Հրդեհաշիջման աշխատանքները կազմակերպվում և իրականացվում է Քաղսի համայնքի N 44_ հրշեջ փրկարարական ջոկատի միջոցով: Հրդեհաշիջման կազմակերպման համար N 44_ հրշեջ փրկարարական ջոկատի կողմից տրամադրվում է 2 մարտական հաշվարկ՝ յուրաքանչյուրը բաղկացած 5 հոգուց:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում հրշեջ-փրկարարական ծառայության մասով (մարտական հաշվարկ, անձնակազմ, գույք և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզային կամ հանրապետական փրկարարական ծառայություն:

Հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, ինքնաբերական և ստեղծում է հրդեհաշիջման աշխատանքներ կատարող կամավորական խմբեր:

4.10 Հասարակական կարգի պահպանման կազմակերպում

Աղետի դեպքում համայնքի ոստիկանական ծառայությունը կազմակերպում է հասարակական կարգի ապահովումը, ուշադրություն դարձնելով տարահանման երթուղիներին, տարահանման հավաքատեղիներին, մատակարարվող նյութերի ու սնունդամթերքի երթուղիների անվտանգության ապահովման ու տարահանված բնակչության գույքի պահպանումը կազմակերպելու վրա:

Հասարակական կարգի պահպանում է իրականացնում փրկարարական աշխատանքների կատարման վայրերում՝ ապահովելով փրկարարների անվտանգությունը, այդ թվում արտերկրից ժամանած: Համայնքի ոստիկանական ծառայության ուշադրության կենտրոնում պետք է լինեն համայնքի ծերերի, երեխաների, կանանց (հատկապես իրի և մանկիկներին խնամող) անվտանգության ապահովման հարցերը:

Հասարակական անվտանգության ապահովման համար տրամադրվում է ոստիկանական խմբեր:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում ոստիկանական ծառայության մասով (անձնակազմ, գույք և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզային կամ հանրապետական ոստիկանական ծառայություն:

Հասարակական կարգի պահպանման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, ինքնաբերական և ստեղծում է հասարակական կարգը ապահովող կամավորական խմբեր:

4.11 Բնակչության բժշկական և առաջին օգնության կազմակերպում

Արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական պաշտպանությունը ներառում է՝

- համայնքի առողջապահական հաստատությունների պատրաստակամությունը արտակարգ իրավիճակներում տուժած բնակչությանը առաջին բժշկական և մասնագիտական օգնություն տրամադրելուն,
- համայնքի առողջապահական հաստատությունների ուժերը և միջոցների մշտական պատրաստվածության ապահովում,
- դեղորայքի և բժշկական գույքի ստեղծում ու պահպանում:

Արտակարգ իրավիճակներում տուժած բնակչությանը բժշկական օգնություն ցուցաբերելու համար օգտագործվում է համայնքի բնակավայրի ամբուլատորիան: Ներգրավում է բժշկական ողջ անձնակազմը :

Արտակարգ իրավիճակներում տուժած ընկերությունը առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար տրամադրվում է շտապ բուժօգնության բրիգադներ: Եթե երկրաշարժի կամ այլ վտանգի հետևանքով հնարավոր չէ բժշկական հաստատությունների շենք-շինությունները շահագործել՝ տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար, ապա գնահատման արդյունքում որոշվում է անվտանգ վայրեր, որտեղ ստեղծվում են բժշկական օգնության տեղամասեր:

Բժշկական ծառայության ուժերն ու միջոցները գտնվում են մշտապես պատրաստ վիճակում և արտակարգ իրավիճակի ժամանակ աշխատելու են արտակարգ ռեժիմով: Շուրջօրյա հերթապահություն է սահմանվում բժշկական հաստատություններում և տարահանման հավաքատեղիներում:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում բժշկական մասով (մասնագետներ, բժշկական գույք, դեղորայք) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ:

Տուժածների մեծ հոսքի դեպքում Քաղսի համայնքի բժշկական կենտրոնը գործելու է իր ողջ հզորությամբ: Բժշկական օգնության կազմակերպման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է առաջին օգնության ցուցաբերման կամավորական խմբեր (ներգրավվում են համապատասխան կրթություն և գիտելիքներ ունեցող անձինք):

4.12 Տրանսպորտային ապահովման կազմակերպում

Տրանսպորտային ապահովումը ներառում է՝

- բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման աջակցությունը (հատկապես ծերերի, երեխաների, հղի կանաց և այլ խոցելի բնակիչների),
- գյուղատնտեսական և ընտանի կենդանիների տեղափոխման աջակցությունը,
- սննդամթերքով, խմելու ջրով և առաջին պարագաներով մատակարարումը,
- ևի գուտի ուժերի և միջոցների տեղափոխման աջակցություն՝ վթարահրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով,
- նյութական և շինարարական միջոցների, ինչպես նաև գյուղատնտեսական և ընտանի կենդանիների համար սննդի տեղափոխման աջակցություն:

Տարահանման, վթարահրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով տրանսպորտի և տեխնիկայի միջոցները.

Բնակավայրի անվանումը	Թեթև մարդատար	Ավտոբուս /միկրոավտոբուս	Բեռնատար, որից ինքնաթիռի	Կողակոր	Էքսկավատոր	Ավտո կրունկ	Ժամանակ վայր	Ժամանակ (Ժ+)	Ծանոթություն
Քաղսի	136	7	5	5	2	1	Համայնքապետարան	2	
ԸՆԴԱՄԵՆԸ									

Աղետի հետևանքները նվազեցնելու համար անհրաժեշտ է ստանալ օպերատիվ տեղեկատվություն ստեղծված իրավիճակի վերաբերյալ, որից հետո տրամադրել հստակ իրահանգներ աղետի հետևանքների վերացման և վարկեականության կանոնների վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է արագ վերականգնել կապի և տեղեկատվության հաղորդման ավտոմատացված համակարգերը: Տեղեկատվության հաղորդման արագությունը և հստակությունը առաջին հերթին կախված է կապի անխափան աշխատանքից: Կապի և տեղեկատվական փոխանակման ապահովման պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի, բնակավայրերի ղեկավարների և տարածքային կապի օպերատորների հետ, հավաքագրում և ստեղծում է կապի և տեղեկատվական փոխանակման ապահովման ապահովման խմբեր: Ստեղծված խմբերի գեր խնդիրն է կապի ապահովումը՝ ԱՌԿ խորհրդի և արձագանքող ստորաբաժանումների, տարահամայն հավաքատեղիների, հարևան համայնքների ու պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև: Անհրաժեշտության դեպքում, կապի կազմակերպման համար կօգտագործվի նաև կառույցների, ծառայությունների և այլ կազմակերպությունների գործող կապի միջոցները:

4.14 Նյութատեխնիկական ապահովման կազմակերպում

Տեխնիկական ապահովումը իրականացվում է ավելորդանսպորտային միջոցների և հատուկ տեխնիկայի մշտապես պատրաստ վիճակում պահելու նպատակով՝ փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար:

Տեխնիկական ապահովումը ներառում է՝

- մնասված տեխնիկայի հավաքագրման կետերի որոշում,
- վնասված տեխնիկայի վերանորոգման կետերի որոշում,
- ապահետանալների և վերանորոգման նյութերի մատակարարում,
- վերանորոգման կետերի որոշում:

Նյութական ապահովումը փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ նյութական միջոցների աջակցությունն է:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների զննհատում նյութատեխնիկական մատով և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Նյութատեխնիկական ապահովման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է նյութատեխնիկական ապահովման կանոնները:

4.15 Կոմունալ-էներգետիկ ապահովման, կապի և տրանսպորտային հաղորդակցության կապերի առաջնահերթ վերականգնողական աշխատանքների իրականացում

Կոմունալ-էներգետիկ անվտանգության ապահովումը և կապի ու տրանսպորտային հաղորդակցության կապերի վերականգնումը համայնքի կենսաապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է:

Կոմունալ-էներգետիկ ապահովման, կապի և տրանսպորտային հաղորդակցության կապերի առաջնահերթ վերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը.

Ոլորտը	1. ջրահավաքման, ջրամաքրման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջրաբաշխման և տնօրինման հիմնական օբյեկտներ, 2. մագիստրալային գծեր և նրանց առնչվող օբյեկտներ, 3. ջրահեռացման գծեր, կառավարման կետերը, ապաստարանները, բժշկական օգնության կետերը մագիստրալային գծերին միացնող կից օբյեկտներ, 4. ցանցի հատված, ներառյալ կից օբյեկտներ՝ ընդունակ զգալի կրճատել ջրամատակարարումից զրկված բնակավայրերի (շրջանների) քանակը, 5. այլ գծեր, կից օբյեկտներ
Էներգամատակարարում	1. էլեկտրաէներգիայի արտադրման, փոխակերպման, հաղորդման և բաշխման հիմնական օբյեկտներ, 2. էլեկտրահաղորդման մագիստրալային մալուխներ և կից տեխնիկական օբյեկտներ, 3. կառավարման կետերը, ապաստարանները, բուժհաստատությունները էլեկտրականությունը ապահովվող տեղային մալուխներ և կից տեխնիկական օբյեկտներ, 4. էլեկտրահաղորդման մալուխներ և կից տեխնիկական օբյեկտներ՝ ընդունակ զգալի կրճատել էլեկտրամատակարարումից զրկված բնակավայրերի (շրջանների) քանակը, 5. էլեկտրամատակարարման այլ մալուխներ և կից օբյեկտներ
Գազամատակարարում	1. հիմնական օբյեկտներ՝ կարգավորող կայաններ, խոշոր պահեստարաններ, 2. մագիստրալային գծեր և կից տեխնիկական օբյեկտներ, 3. գազամատակարարման տեղային ցանցի ճյուղեր, կառավարման կետերը, ապաստարանները, բժշկական օգնության կետերը մագիստրալային գծերին միացնող կից տեխնիկական օբյեկտներ, 4. մագիստրալային և տեղական ցանցի ճյուղեր և կից տեխնիկական օբյեկտներ՝ ընդունակ զգալի կրճատել գազամատակարարումից զրկված բնակավայրերի (շրջանների) քանակը, 5. գազամատակարարման այլ ցանցեր և կից տեխնիկական օբյեկտներ
Կապ	1. հիմնական օբյեկտներ՝ կարգավորող կայաններ, խոշոր պահեստարաններ, 2. մագիստրալային գծեր և կից տեխնիկական օբյեկտներ
Պաշտպանություն	1. խոշոր երկրոտեխնիկական կառույցներ (ամրաբերություններ, ջրապատնեշներ), 2. հիմնական զետերի երկայնքով կարգավորիչ կառույցներ,

4.16 Ինժեներական միջոցառումների կազմակերպում

Ինժեներական միջոցառումների ապահովման կազմակերպումը, անհրաժեշտ է բարենպաստ ինժեներական միջավայր ստեղծելու, բնակչության պաշտպանության և արտակարգ իրավիճակների վերացման միջոցառումներ ձեռնարկելու համար:

Անհրաժեշտության դեպքում ինժեներական տեխնիկայով արագ ստեղծել լրացուցիչ ճանապարհներ, մաքրել և տեղափոխել շինարարական աղբը, ինչպես նաև ձեռնարկել գործողություններ համայնքի վերականգնման / վերակառուցման ուղղությամբ:

Արտակարգ իրավիճակի դեպքում իրականացվում է կարիքների գնահատում ինժեներական միջոցառումների ապահովման մասով և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Ինժեներական միջոցառումների իրականացման համար ներգրավում են համայնքում առկա հնարավոր տեխնիկան:
 Ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատուն՝ համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է ինժեներական միջոցառումների ապահովման կամավորական խմբեր:

Ահլ ՓԾ տարածքային ստորաբաժանման համակարգման ներքո իրականացվում են ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և անցողականության ապահովման աշխատանքներ: Պաշտպանության նախարարության ստորաբաժանումների, ճանապարհաշինարարական և այլ շինարարական կազմակերպությունների ուժերով իրականացվում են ճանապարհների, մայրուղիների, փողոցների մաքրման և հրատապ ինժեներավերականգնողական (կանուղների ամրացում, նորոգում և այլն) աշխատանքներ: Նշված աշխատանքների նպատակն է ապահովել յուրաքանչյուր ճանապարհին, մայրուղում, փողոցում նվազագույնը 2 երթևեկության գծի առկայությունը: Ծայրահեղ աստիճանի տուժածների և առաջնային կարևորություն ունեցող բեռների անհապաղ տեղափոխման համար համայնքում ուղղաթիռների վայրէջքի համար նախատեսվում է հարթակ:

Տրանսպորտային հարողակցության կապերի առաջնահերթ վերականգնողական աշխատանքների իրականացման հերթականությունը.

Տրանսպորտային հարողակցություն	1. Առաջին կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հարողակցությունն ապահովող ճանապարհներ և կանուղներ, երկաթգծեր և կից կառույցներ, օդային հարողակցությունն ապահովող ավտոտրանսպորտային օբյեկտներ (թռիչքուղիներ) 2. Երկրորդ կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հարողակցությունն ապահովող ճանապարհներ և կանուղներ 3. Երրորդ կարգի ավտոճանապարհներով տրանսպորտային հարողակցությունն ապահովող ճանապարհներ և կանուղներ 4. Ծանապարհներ և կանուղներ՝ ընդունակ զգալի կրճատել տրանսպորտային հարողակցությունից կտրված բնակավայրերի (շրջանների) քանակը 5. Տրանսպորտային հարողակցության այլ օբյեկտներ
-------------------------------	---

4.17 Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպում և հաշվառում

Խոշոր աղետի դեպքում դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման կամավորական խմբեր: Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման կամավորական խմբերը համագործակցում են ԱԽՆ և Ոստիկանության մասնագետների հետ: Խմբերը ուստիկանության հետ համատեղ իրականացնում է դիակների ճանաչման գործընթացը, որից հետո իրականացնում հուղարկավորության թույլտվության տրամադրում:

Մահացածների ճանաչումը իրականացվում է Համայնքի ուժերով, եթե պայմաններից ելնելով հնարավոր չէ իրականացնել դատաբժշկական գործողություններ և դիակներում Համայնքի ղեկավարի օրոշմամբ իրականացվում է մահացածների հուղարկավորում, և հաշվառում, հուղարկավորման հողիատկացումը իրականացում է Համայնքի ղեկավարի կողմից:

Հուղարկավորման համար Համայնքը հատկացնում է տարածք և կազմակերպում հուղարկավորման արարողությունը, եթե հարազատները հնարավորություն չունեն ազգագրական գերեզմաններ օգտագործել:

Անհայտ դիակների հուղարկավորման համար հատկացվում է առանձնացված տարածք, հուղարկավորումից առաջ հաշվառելով և պահպանելով հետագա ճանաչման համար առկա պարագաներ (լուսանկարներ, ՂՆԾ (ղեզօքսիդիբոնոսկիենաթոս) նմուշ և այլն):

Անհայտ դիակների հետ գտնված թանկարժեք իրերի պահպանումը կազմակերպում է Ոստիկանությունը:

4.18 Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի անվտանգության կազմակերպում

Խոշոր աղետի դեպքում անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի վարչական ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է դիակների անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող կամավորական խմբեր: Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող կամավորական խմբերը համագործակցում են ԱԻՆ ՓԾ տարածքային ստորաբաժանման, Ոստիկանության և սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժնի մասնագետների հետ: Խմբերը ռատիկանության հետ համատեղ իրականացնում են անհայտ կորածների որոնում, հետազոտում հայտնաբերված անձանց միավորումը իրենց ընտանիքների կամ հարազատների հետ: Անհայտ կորածների որոնման ու դրանց ընտանիքների հետ միավորման կազմակերպման ժամանակ յուրաքանչյուր ուշադրություն է դարձվելու երեխաներին:

4.19 Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում

Այդ խորհրդի հատուկ ուշադրության կենտրոնում պետք է լինեն նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները: Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները պարտավոր չափով պետք է կամ առաջացնեն դեպքում գործում են համաձայն իրենց հաստատության արտակարգ իրավիճակներում գործելու պահանջի: Արտակարգ իրավիճակներում գործելու պահանջով նախատեսված տարահանման, պատսպարման, անհատական պաշտպանական միջոցներով ապահովման և այլ անհրաժեշտ միջոցառումները համաձայնեցված ԱԻՆ ՓԾ տարածքային ստորաբաժանման հետ և հաստատված համայնքի ղեկավարի կողմից:

Անհրաժեշտության դեպքում անհապաղ կազմակերպել աշակերտների և ուսուցիչների տարահանումը վնասված տարածքներից և տեղափոխել ապահով տարածքներ:

Այն դպրոցները և մանկապարտեզները, որոնք հետագայում հնարավոր չեն լինի շահագործել, այդ կրթօջախների սաները կբաժանվեն մյուս դպրոցների և մանկապարտեզների միջև ուսումնական պրոցեսը շարունակելու նպատակով:

Կազմակերպել և իրականացնել առաջնային որոնողակիրկարարական, հրդեհաշիջման ու բուժապահովման միջոցառումներ:

Տարբեր ԱԻ դեպքում էլ անհրաժեշտ է ապահովել ուսուցման պրոցեսի շարունակականությունը, գտնել միջոցներ և ճանապարհներ ուսումնական հաստատությունների արագ վերականգնման և վերաբացման համար:

4.20 Կենսաապահովման կազմակերպում

Խոշոր աղետների դեպքում անհրաժեշտություն է առաջանալու կազմակերպել բնակչության կենսաապահովում՝ նպատակ ունենալով ապահովել համայնքի տնտեսության կայունությունը և արագ վերականգնումը աղետից հետո, ինչպես նաև հետադեպին ժամանակահատվածում բնակչության առաջնային կենցաղային հարցերի կարգավորումը: Կենսաապահովման կազմակերպման պատասխանատուն համագործակցելով համայնքապետարանի և բնակավայրերի ղեկավարների հետ, հավաքագրում և ստեղծում է կենսաապահովման կազմակերպման կամավորական խմբեր:

Ստորև ներկայացված տուժածներին սննդամթերքով և ջրով ապահովման չափաքանակների համաձայն, կենսաապահովման կազմակերպման կամավորական խմբերը չտուժած բնակավայրերից և հարևան համայնքներից հավաքագրում են սնունդ, ջուր, առաջին անհրաժեշտության պարագաներ, հագուստ և այլն՝ տուժած բնակիչներին տրամադրելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է կարիքների գնահատում՝ բնակչության կենսաապահովման մասով (սնունդ, ջուր, առաջին անհրաժեշտության պարագաներ, հագուստ և այլն) և անհրաժեշտ օգնության համար ներկայացվում է հայտ մարզպետարան կամ կառավարություն:

Տուժածներին սննդամթերքով և ջրով ապահովման չափաքանակները (50 հոգու հաշվարկով, 3 օրվա համար):

Հ/հ	Անվանումները	Չափի միավոր	Քանակ
Սնունդ և ջուր (50 հոգու հաշվարկով, 3 օրվա համար)			
1.	Թեփահանված աշորայի և ցորենի I տեսակի ալյուրի խառնուրդից հաց	կգ	90
2.	Ցորենի I տեսակի ալյուրից սպիտակ հաց	կգ	60
3.	II տեսակի ցորենի ալյուր	կգ	4,5
4.	Ձավարեղեն	կգ	15
5.	Մակարոնեղեն	կգ	5
6.	Կաթ և կաթնամթերք	կգ	75
7.	Միս և մսամթերք	կգ	15
8.	Ձուկ և ձկնեղեն	կգ	9

9.	Ճարպեր		կգ	7,5
10.	Շաքար		կգ	10,5
11.	Կարտոֆիլ		կգ	75
12.	Բանջարեղեն		կգ	27
13.	Աղ		կգ	4,5
14.	Թեյ		կգ	0,3
15.	Պանիր		կգ	3
16.	Զուր (խմելու)՝ մաքրագտված ոչ հանքային - ամառային ամիսների ընթացքում		լիտր լիտր	375 750
17.	Ամառի պատրաստում, վացում, այլ թվում՝ - սննդի պատրաստում և խոհանոցային ամանեղենի վացում - անհատական ամանեղենի վացում - դեմքի և ձեռքերի վացում		լիտր լիտր լիտր լիտր	1125 525 150 450

4.21 Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը

Տարահանված բնակչությանը կացարաններով ապահովելու համար նախատեսվում է ընտրել չվստանալի, անվտանգ դպրոցների ու մանկապարտեզների դահլիճներ և հասարակական այլ շենքեր շինություններ, ինչպես նաև ծեղք բերել վրաններ շենքերում չտեղակայված բնակիչների համար՝ միևնույն ժամանակ ապահովելով առաջնային անհրաժեշտության սննդով և ջրով ապահովելու հարցը, ստեղծել պայմաններ առաջացող աղբի հեռացման համար: Վրանների անհրաժեշտության պարագայում մարզպետարան կամ կառավարություն ներկայացվում է հայտ:

4.22 Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության կազմակերպում

Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանությունն իրականացվում է ուժեղ երկրաշարժերի, հրդեհների և այլ դեպքերում՝ անվտանգ վայր դրանց դուրսբերմամբ (հավելված N 5):

4.23 Բնակավայրերում աղետների հետևանքների վերացման ուղղությամբ միջոցառումների անցկացում

կտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի կամ ծագման դեպքում՝ բնակավայրի ղեկավարը ստանալով ազդարարում կամ տեսնելով ավերակ-
ություններ կամ այլ աղբյուրներից տեղեկանալով աղետի մասին անմիջապես կազմակերպում է.

- աղետների հետևանքների վերացման աշխատանքներ,
- բնակչության տարահանում անվտանգ տարածք,
- ունեցվածքի, գյուղատնտեսական կենդանիների տարահանում և փրկում,
- սուժած բնակչությանը բժշկական կամ առաջին օգնության տրամադրում,
- սուժած բնակչությանը սննդով և առաջին անհրաժեշտության իրերով ապահովում,
- ԱՌԿ խորհրդին ներկայացնել կորստի հաշվետվություն:

Աշխատանքները արագ, օպերատիվ և արդյունավետ կազմակերպելու համար բնակավայրի ղեկավարը չտուժած բնակչությունից անմիջապես
հավաքագրում է աղետների հետևանքների վերացման խմբեր (հրշեջ-փրկարարական աշխատանքների կազմակերպման, հասարակական կարգի
պահպանման, բժշկական կամ առաջին օգնության, կենսաապահովման կազմակերպման, տարահանման կազմակերպման և այլ անհրաժեշտ խմբեր):
Բնակավայրի օպերատորը չտուժած բնակչությունից անմիջապես հավաքագրում է խմբեր, որոնք կիրականացնեն հետախուզություն, կարիքների
գնահատում, ինժեներական միջոցառումներ և այլ անհրաժեշտ աշխատանքներ: Հետախուզության արդյունքները, կարիքների գնահատման տվյալները,
աղետների հետևանքների վերացման ուղղությամբ իրականացված միջոցառումների մասին տեղեկատվությունը անմիջապես փոխանցվում է Աղետների
ճիսկի կատարված խորհուրդ: Բոլոր տուժած բնակավայրերը, որոնք պետք է դրսից ընդունեն փրկարարական, բժշկական և այլ ուժեր, պետք է
նախատեսեն և ընտրեն անվտանգ տարածքներ նշված ուժերի տեղակայման համար: Չտուժած բնակավայրերի ղեկավարները բնակչության շրջանում
հավաքագրում են կամավորների՝ ստեղծելով հրշեջ-փրկարարական աշխատանքների կազմակերպման, հասարակական կարգի պահպանման,
կարիքների գնահատման, ինժեներական միջոցառումների ապահովման, կենսաապահովման կազմակերպման, տարահանման կազմակերպման և այլ
անհրաժեշտ խմբեր: Ստեղծված խմբերի մասին տեղեկատվությունը փոխանցվում է ԱՌԿ խորհուրդ, որի կողմից էլ ստեղծված խմբերը ուղարկվում են
համապատասխան աշխատանքների կատարման վայրեր:

4.24 Մարդասիրական օգնության ստացման, բեռնաթափման, բաշխման և այլ պետություններից ժամանած փրկարարական ուժերի ընդունման կազմակերպում

Համայնքապետարանը աղետից հետո մինչև առաջին օրվա ավարտը օգնության հայտ է ներկայացնում Արտակարգ իրավիճակների
անըրապետական կամ մարզային հանձնաժողովին:

Օգնության հայտը ձևակերպվում է գրավոր (հայերեն լեզվով):

Օգնության հայտը ներկայացվում է գործող կապի միջոցներով՝ համակարգիչ (ինտերնետ), հեռախոս, ֆաքս:

Օգնության հայտի ձևակերպման հիմք են հանդիսանում ստեղծված իրավիճակի եզրակացությունները, ճեղքնթաց (արագ) գնահատման խմբերի
նախատականները՝ կարիքների գնահատման հարցաթերթիկներով և նախադարձական հաստատությունների կարիքների
նախատման հարցաթերթիկներով:

Միջազգային փրկարարական ուժերի և օգնության ընդունման, ստացման ու բաշխման միջոցառումները բաղկացած են՝ մարդասիրական օգնության
նդունմից, մարդասիրական օգնության բաշխումից:

Մարդասիրական օգնությունը տրվում է ԱՌԿ խորհրդի հսկողությամբ՝ տուժած բնակավայրերի կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

4.25 Փոխգործողությունների կազմակերպում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աղետը լրջորեն խաթարում է հասարակության և համայնքի կենսագործունեությունը և գերազանցում է հասարակության կամ Համայնքին սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը, շատ կարևոր է ՀՀ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, գինկորական կայազորների, կազմակերպությունների, ինչպես նաև հարևան համայնքների հետ փոխգործողությունների կազմակերպումը: Փոխգործողություններ իրականացվում են հետևյալ ուղղություններով՝ տեղեկատվության փոխանակումը (ազդարարումը) միմյանց միջև, իրավիճակի գնահատումը (միմյանց շահերի համար), փրկարարական և անհետաձգելի աշխատանքների, հրդեհաշիջման, առաջին օգնության, տեղափոխումների, բնակչության տարահանման և այլնի:

Վ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԿԱՆՔՆԱՆ /ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԱՌ-ին արագ և համապատասխան արձագանքման գործողություններից հետո համայնքում սկսվում են վերականգնման/վերակառուցման աշխատանքները՝ ինչպես համայնքի և ՀՀ կառավարության ուժերով, այնպես էլ միջազգային աջակցող կազմակերպությունների կողմից իրականացվող աջակցությամբ:

Վերականգնման միջոցառումների նպատակն է համայնքի արագ վերականգնումն ու կենսագործունեության վերականգնումը, ներառյալ՝ բնակելի ֆոնդը, կենսապահովման համակարգը, զբաղվածությունը, առողջապահությունը, բարեկեցությունը, ուսուցումը:

Վերակառուցման/վերականգնման միջոցառումները ուղղված են ենթակառուցվածքների/կոմունալ-էներգետիկ համակարգերի, շինությունների կայունության ապահովմանն ու բարձրացմանը, որանց արագ վերանորոգումը, շահագործումը և պահպանումը նպատակային ու արդյունավետ դարձնելու համար:

Համայնքի վերակառուցման/վերականգնման որակը ԱՌԿ խորհրդի կողմից փնելու է առաջնահերթ: Բնական աղբյուրները հնարավորություն են տալիս «անել ավելի լավը, քան կար»՝ բնակելի շենքերի, ճանապարհների, կրթական օջախների, հիվանդանոցների և այլ շենք-շինությունների որակը բարելավելու համար: Բնակելի շենքերի և հանրային ենթակառուցվածքների վերականգնումը պետք է իրականացվի անվտանգության բարձրագույն չափանիշներին համապատասխան, ինչը կնվազեցնի աղետների ռիսկը:

Վ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

- 1) Համայնքի բնակավայրերի վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկերները (Պլանի հավելված N 1).
- 2) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների օրացույցը (Պլանի հավելված N 2).
- 3) 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման միջոցառումների պլան-ժամանակացույցը (Պլանի հավելված N 3).

- 4) Համայնքի ազդարարման և տեղեկատվության փոխանակման սխեմա (Պլանի հավելված N 4)։
- 5) Տարիանման ժամանակը (Պլանի հավելված N 5)։
- 6) Ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների (Պլանի հավելված N 6)։

VII ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քաղսի համայնքի ԱՌԿ պլանում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

- 1) Արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջության ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման։
- 2) Արտակարգ իրավիճակների կանխում՝ արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշում և վերացում։
- 3) Արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցում՝ նախօրոք իրականացվող միջոցառումների համալիր՝ արտակարգ իրավիճակների ազդեցության հնարավոր մեղմացման համար։
- 4) Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում՝ արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կատարում՝ մարդկանց կյանքի ու գործունեության բնականոն պայմաններ ապահովելու համար։
- 5) Աղետ՝ բնակչության, նյութական, տնտեսական կամ բնապահպանական կորուստների այնպիսի մակարդակ, որը լրջորեն խաթարում է հասարակության և Համայնքի կենսագործունեությունը և գերազանցում է հասարակության կամ Համայնքին սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը։
- 6) Աղետի գոտի՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օբյեկտ) կամ տարածքի մի մաս։
- 7) Բնակչության պաշտպանության ձևերն են՝ տարահանում, պատսպարում և անհատական պաշտպանություն։
- 8) Տարահանում՝ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում և տեղաբաշխում։
- 9) Պատսպարում՝ արտակարգ իրավիճակներում զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովում՝ համապատասխան շինությունների տարածքում։
- 10) Անհատական պաշտպանություն՝ մարդկանց՝ ճառագայթային, թունավոր և մանրէաբանական նյութերից պաշտպանության միջոցներով ապահովում։

12) Վտանգ՝ պոտենցիալ գործընթաց կամ երևույթ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, խեղանդամության, հիվանդությունների կամ այլ առողջական հետևանքների, զույքի վնասման, կենսամիջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական

ցնցումների կամ շրջակա միջավայրի վնասի: Կարելի է ասել, որ վտանգը պոտենցիալ երևույթներից և գործընթացներից ոչ ցանկալի հետևանքներ ունենալու ակնկալիքն է:

13) Խոցելիություն՝ համայնքին, համակարգին կամ ակտիվին բնորոշ այն պայմաններն ու բնութագրերը, որոնք բարձրացնում են վերջիններիս վտանգի ավերիչ ազդեցություններին ենթարկվելու հավանականությունը: Կարելի է ասել, որ խոցելիությունը վտանգից անպաշտպանվածության աստիճանը կամ պոտենցիալ վտանգավոր երևույթի զարգացման արդյունքում ծագած կորուստների աստիճանն է (0-100)%:

14) Աղետի ռիսկ՝ վտանգի կամ վտանգավոր երևույթի հավանական ազդեցության հետևանքով հասարակական ծառայությունների, կենսամիջոցների և ունեցվածքի, առողջության վատթարացմամբ և մարդկային զոհերով արտահայտված հնարավոր աղետալի կորուստներ, որոնք կարող են առաջանալ որևէ Համայնքում կամ հանրության մեջ: Կարելի է ասել, որ աղետի ռիսկը վտանգի կամ վտանգավոր երևույթի աղետալի ազդեցության հավանական չափն է՝ արտահայտված կորուստներով:

15) Կարողություն՝ կարողությունն առկա բոլոր պաշարների ամբողջությունն է, որը կարող է նպաստել անվտանգության ապահովմանը: **16) Դիմակայունություն՝** վտանգին դիմակայելու ունակությունն է, որն իր մեջ ներառում է վտանգի հետևանքներին դիմակայելը, դրան հարմարվելը և ժամանակին ու արդյունավետ վերականգնվելը, այդ թվում՝ համայնքի իմնական գործառույթների պահպանման և վերականգնման միջոցով:

VIII ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՌ-աղետների ռիսկ

ԱՌ-4-աղետների ռիսկի կառավարում

ԱՌՆ - աղետների ռիսկի նվազեցում

ԱԻ - արտակարգ իրավիճակներ

ԱՕ-առաջին օգնություն

ԱԻՆ -Արտակարգ իրավիճակների նախարարություն

ՓԾ-փրկարար ծառայություն

ՄՓՎ-մարզային փրկարարական վարչություն



ՔԱՂԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌԱՏԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ԱՌԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐՆԵՐ


ՔԱՂԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎՏԱՆՔՆԵՐԻ,

ԽՈՅԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ


ԳԵՏԻ ՎԱՐԱՐՈՒՄ

Ծովի մակարդակից բարձր է՝

- 1) 1750 մ
- 2) 1650մ



ՔԱՐԱԹԱՓՈՒՄ



Քարտեզ-սխեմա
Երկրաշարժի դեպքում տարահանման





տառապանակալից դադարեցնել



ուղղորդել դեպի առողջություն



ստանալով դադարեցնել



ճանաչելով ստանալ



ճանաչելով ստանալ



խոսելով իրենց - դադարեցնել



տ

[illegible]

[illegible]

16-17-րդ դարեր	Բարձր/արդարագ/ պատրաստականության մակարդակ	Արձագանքում, վճարավերականգնողական աշխատանքներ, հետևանքների վերացում
10-ից 15-ը ցուցանիշների դեպքում	Միջին պատրաստականության մակարդակ	Բնակչության իրազեկման, կարողությունների բարձրացման, կանխարգելման ու աղբյուրների հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումները պարզադիր են կարարման համար
0-ից մինչև 9-ը ցուցանիշը	Նվազագույն պատրաստականության մակարդակ	Բնակչության ուսուցում, իրազեկում, կարողությունների զարգացում, կանխարգելում, աղետների ռիսկի նվազեցում

Հավանականության գործակից

0-գործակից (հավանական չէ)	1-գործակից (միջ հավանական է)	2-գործակից (հավանական է)	3-գործակից (շատ հավանական է)	4-գործակից (սխալ հավանական է)	5-գործակից (գաիազանց հավանական է)
------------------------------	---------------------------------	-----------------------------	---------------------------------	----------------------------------	---

Արտակարգ իրավիճակի ծագման հավանականությունը ընթացիկ ամսվա ընթացքում 0-ը 40-ը	Արտակարգ իրավիճակի ծագման հավանականությունը ընթացիկ ամսվա ընթացքում 40-ը 60-ը	Արտակարգ իրավիճակի ծագման հավանականությունը ընթացիկ ամսվա ընթացքում 60-ը 80-ը	Արտակարգ իրավիճակի ծագման հավանականությունը ընթացիկ ամսվա ընթացքում 80-ը 100-ը	Արտակարգ իրավիճակի ծագման հավանականությունը ընթացիկ ամսվա ընթացքում 100-ը
1-գործակից (անմշակ ազդեցություն)	2-գործակից (կախվող ազդեցություն)	3-գործակից (ուժեղ ազդեցություն)	4-գործակից (շատ ուժեղ ազդեցություն)	5-գործակից (աղիսկալի ազդեցություն)

Ազդեցություն

Կարող են դիտարկվել աննշան ազդեցություններ (կենսաբանություն, շրջակա միջավայր, նյութական արժեքներ), սակայն չեն ունենում ազդեցություն համայնքի վրա, կատարման մարմինները իրենց ամենօրյա գործառնությունները իրականացնում են ամենօրյա աշխատակարգով	Կարող են դիտարկվել չսահման ազդեցություններ (մարդկանց կյանք և առողջություն, կենսաբանություն, շրջակա միջավայր, նյութական արժեքներ), սակայն չեն ունենում ազդեցություն համայնքի վրա, կատարման մարմինները իրենց գործառնությունները իրականացնում են ամենօրյա աշխատակարգով	Կարող են դիտարկվել ուժեղ ազդեցություններ, (մարդկանց կյանք և առողջություն, կենսաբանություն, շրջակա միջավայր, նյութական արժեքներ), սակայն չեն ունենում ազդեցություն համայնքի վրա, կատարման մարմինները իրենց գործառնությունները իրականացնում են արտակարգ աշխատակարգով	Կարող են դիտարկվել շատ ուժեղ ազդեցություններ (մարդկանց կյանք և առողջություն, կենսաբանություն, շրջակա միջավայր, նյութական արժեքներ, մարդկանց կենսազոհությունների բնական պայմաններ), կատարման մարմինները իրենց գործառնությունները իրականացնում են արտակարգ աշխատակարգով	Կարող են դիտարկվել ազդեցություններ (մարդկանց կյանք և առողջություն, կենսաբանություն, շրջակա միջավայր, նյութական կոռուպցիոն, մարդկանց կենսազոհությունների բնական պայմաններ), կատարման մարմինները իրենց գործառնությունները իրականացնում են արտակարգ աշխատակարգով և ինքնակենսական վերացումը գերազանցում է սեփական ուժերով հաղթահարելու կարողությունները
---	--	---	--	--

